ժամանակ Դարբանդում կային Հայեր, թէ ոչ՝ մեզ յայտնի չէ, բայց գաղթականութիւնից յետոյ այդ քաղաքում Հայերի մեծ բազմութիւն կար։ Մեծամասնութիւնը, ի հարկէ, Շահաբբաս ուղարկեց Սպահանի նահանգը։ Քաղաքացիներին բնակեցրեց Սպահանում, Քեաշանում, Ղազվինում, իսկ գաւառացիներին՝ Սպահանի շրջակայ աւաններում եւ գիւղերում։ Ահա այն քաղաքները, գաւառներն եւ գլխաւոր գիւղերը, ուր բնակեցրին Հայերին. — Ղազվին, Քեաշան, Սպահան քաղաքները։ Սպահան նահանգի հետեւեալ գաւառները — Ալնջան, Լնջան, Գանդիման, Ջղախոռ, Փէրիա, Բուրվար, Քեազազ, Քեամարա, Գեափլա, Քեարվանդ եւ Ղարաղան։ Ալնջան եւ Լնջան գաւառները Սպահանից 4—5 փարսախով հեռու են եւ բաղկացած են, առաջինը՝ 7, երկրորդը 10 գիւղերից. Գանդիման եւ Ջղախոռ գաւառները հեռու են 14 փարսախով ու բաղկացած են 5 գիւղերից. Փէրիան 22 գիւղ ունի, իսկ Բուրվարը՝ նոյնպէս 22։ Վերոյիշեալ բոլոր 66 գիւղերի անուններն են։ — Մշաղբուր, Փիդուն, Զազռան, Քափաջան, Բանդարի, Քուրուջ եւ Մէմիդ. — Փարթուն, Ջուդուն, Ջուզուն, Քիլիսուն, Փելարդ, Բուրուզարդ, Սէմնուն, Խուանապէք, Միտագիւն եւ Քեալէ. — Ամմատաբադ, Սիրաք, Գիշնիգան, Լիւասիան, Ջիւրիգիան, Ֆանդիգան. — Հազարջրիբ, Մէդանակ, Փրնստան, Աղչայ, Տաշքեալան, Բոլորան, Խունկ, Խնկիրանայ, Շահբուայ, Շուրիշկան, Միլագերդ,